ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

07.02.2018թ

N 24

ՀՀ Լոռու մարզպետ

պարոն Ա. Նալբանդյանին

Կից ներկայացնում ենք Ձորագյուղ համայնքի ավագանու 29,01,2018 թ-ի թիվ 01- Ա և 02-Ն որոշումները համաձայն հավելվածների և համայնքի ղեկավարի 06.02.2018 թ-ի թիվ 05-Ա որոշումը:

Առդիր՝ 5 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ս. Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

29. 01. 2018թ. **ՈՐՈՇՈՒՄ** թիվ 01-Ա

## ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018Թ_Ի ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Ձորագյուղ համայնքի ավագանին

Որոշում է

1. Հաստատել Ձորագյուղ համայնքի ավագանու 2018թ-ի հունվարի 29-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Ռուզաննա Հարությունյան | | | |
| Վալոդյա Հովսեփյան | — | | |
| Վահրամ Հովսեփյան | | | |
| Արտակ Հովհաննիսյան | | | |
| Հովսեփ Սիմոնյան | — | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. Հարությունյան

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Զորագյուղ համայնքի ավագանու
2018 թվականի հունվարի 29 -ի թիվ 01 -Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

## ԶՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018Թ_Ի ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1. ԶՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018Թ_Ի ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ԶՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. Հարությունյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

29. 01.2018թ　　　　　　　　　　　　　　　　　　　թիվ 02-Ն

# ՈՐՈՇՈՒՄ

## ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ Ձորագյուղ համայնքի ավագանին

Որոշում է

Հաստատել Ձորագյուղ համայնքի 2017թ.-ի բյուջեի տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Ռուզաննա Հարությունյան | [signature] | | |
| Վալոդյա Հովսեփյան | — | | |
| Վահրամ Հովսեփյան | [signature] | | |
| Արտակ Հովհաննիսյան | [signature] | | |
| Հովսեփ Սիմոնյան | — | | |

Համայնքի ղեկավար՝ _______________ Ս.Հարությունյան

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՀՀ 07300874

Հավելված
Չորագյուղ համայնքի ավագանու
2018 թվականի Հունվարի 29-ի
N 02-Ն որոշման

## Վարչական բյուջեի եկամուտներ

| | | Պլան | Փաստացի |
|---|---|---|---|
| 1 | **Ընդամենը** | 6984.4 | 6140.1 |
| 2 | Հողի հարկ | 2710.6 | 1959.3 |
| 3 | Գույքահարկ շինություններից | 2.0 | 0.4 |
| 4 | Գույքահարկ փոխադրամիջոցներից | 482.4 | 417.2 |
| 5 | Պահուստային հողի վարձավճար | 181.5 | 183.4 |
| 6 | Տեղական տուրք օղու և ծխախոտի համար | 36.0 | 27.0 |
| 7 | Դոտացիա | 3500.0 | 3494.2 |
| 8 | Այլ դոտացիա | 0.0 | - 5.8 |
| 9 | Շենքի վարձավճար | 71.9 | 50.0 |
| 10 | Ֆոնդային բյուջեի մնացորդ | 1572.9 | 600.0 |

## Ծախսային մաս

| | | Հոդված | Պլան | Փաստացի |
|---|---|---|---|---|
| | **Ընդամենը** | | 8557.3 | 6695.2 |
| 11 | Կառավարման ապարատ | | 5396.0 | 5211.9 |
| 12 | Աշխատավարձ | 4111 | 5000.0 | 4950.9 |
| 13 | Էներգետիկ ծառայություն | 4212 | 220.0 | 163.8 |
| 14 | Կապի ծառայություն | 4214 | 50.0 | 48.2 |
| 15 | Ներքին գործուղումներ | 4221 | 50.0 | 3.0 |
| 16 | Տեղեկատվական ծառայություն | 4234 | 16.0 | 16.0 |
| 17 | Գրասենյակային նյութեր | 4261 | 30.0 | 30.0 |
| 18 | Առողջական կենտրոն | 4637 | 30.0 | 0.0 |
| | **Այլ ծախսեր** | | | |
| 19 | Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 972.0 | 0.0 |
| 20 | Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 500.0 | 500.0 |
| 21 | Վարչական սարքավորումներ | 5122 | 100.9 | 100.0 |
| 22 | Նախադպրոցական հիմնարկ ընթացիկ դրամաշնորհ, պետ. և համ. ոչ առ. կազմ | 4637 | 1130.2 | 853.2 |
| 23 | Անապահով ընտանիքներին օգնություն այլ նպ. բյուջեից | 4729 | 300.0 | 30.0 |
| 24 | Պահուստային ֆոնդ | | 158.2 | 0.0 |

Համայնքի ղեկավար Ս. Հարությունյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագյուղ համայնք

«06» փետրվարի 2018թ N - 05Ա

# ՈՐՈՇՈՒՄ

## 06-066-0019-0004 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱՐՆԻԿ ՄԻԽԱՅԻԼԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հիմք ընդունելով քաղաքացի Գ.Հովսեփյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.04.1991թ. թիվ 1 որոշումից քաղվածքը, 02.02.2018թ թիվ 310 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, հողամասի և շենք շինությունների հատակագծերը, Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60 և 64 հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածով, ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

2. ՀՀ Լոռու մարզ Ձորագյուղ համայնքի 06-066-0019-0004 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.13133հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել և վերականգնել Գարնիկ Միխայիլի Հովսեփյանի /ծնված 16.07.1950թ/ սեփականության իրավունքը:
3. Ճանաչել 06-066-0019-0004 ծածկագրով 0.13133հա հողամասի վրա գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների իրականացված, հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 2001թ կառուցված 78.63քմ բնակելի տան նկատմամբ Գարնիկ Միխայիլի Հովսեփյանի սեփականության իրավունքը:
4. Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
6. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ձորագյուղ համայնք 8-րդ փողոց 3-րդ նրբանցք թիվ 6 բնակելի տուն:
7. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից::

Համայնքի ղեկավար՝ Ս. Հարությունյան